«Հաստատում եմ»
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր՝ Դ. Գալոյան
«10» մայիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արփինե Մեխակի Կյուրեղյանի «Գործարար միջավայրի կառավարման սոցիալ- տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Մասնակցում էին՝ «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման» ամբիոնի վարիչի ժ/պ՝ տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մելքումյանը, դոցենտներ՝ Ա. Սարգսյանը, Ա. Եղիազարյանը, Ա. Սիմոնյանը, Ֆ. Բահարյանը, Ա. Քալանթարյանը, Հ. Թումասյանը, ասիստենտներ Ա. Շեկյանը, Հ. Մելքումյանը, Ս. Վարդանյանը, Ա. Առաքելյանը, Է. Մովսիսյանը, ավագ լաբորանտ՝ Ի. Վարդանյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում: Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն անխուսափելի գործընթաց է, ինչը ենթադրում է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները: Այսպես, օրինակ, ՀՀ-ում անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել ՓՄՁ-ների հարկման դաշտում և տնտեսական քաղաքականության գործիքակազմի կառուցվածքում, քանի որ ՓՄՁ-ների զարգացումն ինքնին ապահովում է սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների լուծում, ինչպիսիք են՝ քաղաքացիների զբաղվածությունը, ինքնազբաղվածությունը, ընտանեկան

բիզնեսը: ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում անհրաժեշտ է վերանայել տնտեսության ոլորտներում իրականացվող տնտեսական մեխանիզմները, և առավելություններ սահմանելով այն ոլորտների համար, որոնք ապահովում են բարձր ավելացված արժեք, արտահանման դիվերսիֆիկացում և ներմուծման փոխարինում: Տնտեսական գործիքակազմի վերանայման արդյունքում անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով կարող է նվազեցվել ՀՀ-ում ստվերային բիզնեսը, մասնավորապես իրականացվի կազմակերպությունների ֆորմալացում ՝ ինչպես փոքր, այնպես էլ միջին և խոշոր, այդ թվում նաև՝ աշխատուժի, շրջանառության և հարկերի առումով: Պետք է նշել, որ դեռևս գոյություն ունեն այսպես կոչված, պետական կառավարման մարմինների և բիզնեսի «սերտաճման» խնդիրներ, որոնց պատճառով Հայաստանում գործարար միջավայրի բարելավում տեղի չի ունենում, քանի որ բախվում են օրինական հարկ վճարողների և «պետական հովանավորչական» հարկ վճարողների բիզնես շահերը, որի արդյունքում կորում է օրինական դաշտում գործող տնտեսվարող սուբյեկտների մոտիվացիան: Բազմաթիվ հեղինակներ, այդ թվում նաև հայազգի և օտարազգի, իրականացրել են գործոնային վերլուծություն գործարար միջավայրի բարելավման,դրա գործոնների վերլուծության, հարկայի համակարգի, ներդրումային միջավայրի առումով, սակայն ատենախոսության նպատակներից մեկը ոչ թե առանձին ցույց տալ գործարար միջավայրի բարելավմանը նպաստող գործոնները,այլև այդ գործոնների համակարգման միջոցով ցույց տալ, թե դրանք ինչ ազդեցություն են ունենում կամ ունենալու բնակչության սոցիալ- տնտեսական զարգացման, կենսամակարդակի բարձրացման, պետության խնդիրների լուծման վրա: Պետք է նշել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշներով, որոնք ուղղակի և անմիջական ազդեցություն են ունենում, օրինակ՝ արտահանման և ներմուծման ծավալների դինամիկայի, տրանսֆերտների, վարկային տոկոսադրույքների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության աստիճանի, իրավական համակարգի, ներդրողների շահերի պաշտպանվածության վրա, որոնք առավել անմիջական ազդեցություն են ունենում գործարար միջավայրի վրա, քան հարկերը: Աշխատանքում իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որի միջոցով հենց հիմնավորվել են այդ յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա, ինչն էլ իր հերթին նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գործարար միջավայրն է, իսկ հետազոտության առարկան՝ գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել գործարար միջավայրի կառուցվածքը և այն բնութագրող տարրերը,
- իրականացնել գործոնային վերլուծություն գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնների վերաբերյալ,
- համեմատել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնները արտերկրում և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,
- համակարգել ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում,
- մշակել տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմներ գործարար միջավայրի համատեքստում,
- համակարգել տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել գործարար միջավայրի վերաբերյալ տարբեր տնտեսագետների հրապարակումները գրքերի ու գիտական հոդվածների ձևով: Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, ՋԱԿ-ի, Համաշխարհային բանկի, «Doing Business» տարեկան զեկույցների, ՏՀՋԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական,համեմատական, էմպիրիկ, վերլուծության տնտեսաչափական մեթոդներ և գործիքներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հեղինակի կողմից ներկայացված գիտական նորույթներն են՝

1. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգման արդյունքում բացահայտվել են գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններն ու տնտեսության իրական հատվածում առկա ռիսկերը՝ առաջարկվել է ենթակառուցվածքային բարեփոխումներ՝ դրանց նվազեցմանն ուղղված:

2. Գնահատվել է պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ազդեցությունը համախառն ներքին արդյունքի վրա և ուրվագծվել են պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն համագործակցության շրջանակների ընդլայման մոտեցումները:

3. ՀՀ-ում զբաղվածության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվել են առավել բարձր արժեք ունեցող ոլորտներում (գյուղատնեսություն, հագուստի արտադրություն) գործարար ակտիվության խթանումը և այդ ոլորտներում ներմուծման փոխարինման քաղաքականության իրականացման մեխանիզմներ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները,հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը,տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Գործարար միջավայրի դերը տնտեսության զարգացման գործում» գլխում ներկայացված է գործարար միջավայր հասկացության բնորոշումները, գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային վերլուծությունն արտերկրում,ինչպես նաև վերջինիս տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության երկրորդ՝ «Գործարար միջավայրի արդյունավետ կառավարման մեխանիզմների գնահատման մոտեցումները ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում» գլխում ներկայացված են գործարար միջավայրի վրա ազդող կառավարման մեխանիզմները, ինչպես նաև՝ համակարգվել են ՀՀ սոցիալ–տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում:

Ատենախոսության երրորդ՝ «Գործարար միջավայրի բարելավման և տնտեսական առաջնահերթությունների զարգացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև բացահայտվել են համախառն ներքին արդյունքի վրա ազդեցություն ունեցող գործոնները, վերջիններիս ազդեցությունը ներկայացնելու համար մշակվել է ռեգրեսիոն հավասարում:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ատենախոսը ներկայացրել է հետազոտությունից բխող առաջարկները:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ: Ստորև ներկայացվում են ատենախոսության վերաբերյալ դիտողությունները՝

1. Գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն թեմայի անվանման և փաստացի կառուցվածի և բովանդակության միջև: Բացի այդ, հստակության պակաս կա ձևակերպումներում, օրինակ՝ 2.2 ենթակետի:

2. Շարադրանքում կան բազմաթիվ խմբագրական և իմաստային թերություններ, առնվազն ոչ ճիշտ ձևակերպումներ: Օրինակ, ինչպես հասկանալ 4-րդ էջի երրորդ տողում և հաջորդ պարբերությունում բերված "բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման" արտահայտությունը: Հենց նույն էջի երկրորդ պարբերությունում խմբագրական խնդիրներ կան:
3. Հասկանալի չէ, թե ինչու 3-րդ գիտական նորույթում նշված գյուղատնտեսությունը և հագուստի արտադրությունը հեղինակը համարում է առավել բարձր արժեքներ ունեցող ոլորտներ: Գյուղատնտեսության մասով առնվազն հակասության մեջ են մտնում ճյուղում զբաղվածությունը բարձրացնելու և ճյուղում արտադրողականությունը բարձրացնելու /այսինքն, բարձրարժեք գյուղատնտեսություն ունենալու/ մոտեցումները: Հագուստի արտադրության մասով հարկ է նշել, որ, բարձր զբաղվածություն ապահովող հագուստի արտադրությունը միաժամանակ չի համարվում բարձր արժեք ստեղծող: Բացի այդ, հիմնավորված չի կարող համարվել այս ոլորտում ներմուծման փոխարինման քաղաքականությունը:
4. 1.2 ենթակետի առաջին մասում հեղինակը շարադրել և փորձել է վերլուծել է Doing business -ի որոշ ցուցանիշներ, որոնք ներառում են մինչև 2017թ. տվյալները, այն դեպքում, երբ հասանելի են Doing business 2020 ցուցանիշները: 35 էջից մինչև 42 էջը սկսած խոսվում է արտաքին շուկաներին ինտեգրման մասին, վերլուծվում է արտահանման կառուցվածքը /ընդ որում վերլուծության համար օգտագործվել են արդեն հնացած ցուցանիշներ, օրինակ 2017 թվականի առաջին եռամսյակ և այլն/, գծապատկեր 1.2.1-ում ներկայացված է Հայաստանից առանձին ապրանքատեսակների արտահանման կառուցվածքը 2015-2016թթ., 1.2.2-ում ներկայացված է 2015-2016թթ. ՀՀ առանձին ապրանքատեսակների ներմուծումը: Դրան հետևում է աղյուսակ 1.2.5-ը, որտեղ ներկայացված է ՀՀ արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման կառուցվածքում 2000-2017թթ: 1.2.6 աղյուսակում էլ ներկայացված է ՀՀ արտահանման տեսակարար կշիռը ԵԱՏՄ երկրների արտահանման կառուցվածքում 2000-2017թթ. /այս առումով հատկանշական է, որ հեղինակը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ԵԱՏՄ-ն ստեղծվել է 2015թվականին/: 1.2.7 աղյուսակում էլ ներկայացված է ՀՀ ներմուծման տեսակարար կշիռը ԵԱՏՄ երկրների ներմուծման կառուցվածքում 2000-2017թթ. /ընդ որում վերլուծությունը կատարվել է 2000-2007թթ. կտրվածով, 2010թ.-ի ցուցանիշները 2008թ. ցուցանիշների հետ համեմատելու միջոցով: Թե ինչ խնդիր են լուծում այս ցուցանիշների ներկայացումը և ոչ պատշաճ վերլուծությունը անհասկանալի է:

5. "2.1 Գործարար միջավայրի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմները ՀՀ-ում" ենթակետում հանրահայտ և ընդհանուր բնույթի տեսական շարադրանք է /43-47էջ/ և ՀՀ ՓՄՁ սուբյեկտների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների ներկայացում, ընդ որում, հասկանալի չէ, թե ինչու են տեքստում երբեմն համեմատվում 2012 և 2010 թվականների ցուցանիշները /էջ 47-53/: Ենթակետի անվանումից բխող խնդիրը լուծված չէ: 51 էջի վերջին պարբերությունն ընդհանրապես չի տեղավորվում ՓՄՁ ցուցանիշների վերլուծության մեջ:
6. 2.2 ենթակետի սկզբում նշվում է, որ աշխատանքում "իրականացվել է գործոնային վերլուծության մեթոդը, որի հիմքում դրվել է մակրոտնտեսական ցուցանիշների միջոցով հիմնավորել , թե հատկապես որ ցուցանիշներից է կախված գործարար միջավայրի բարելավումը" /հայերեն ոչ ճիշտ ձևակերպում/: Դրանից մեկ նախադասություն հետո հեղինակը գրում է, որ "ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել է մշակել հասցեական միջոցառումներ՝ ուղված գործարար միջավայրի բարելավմանը, որն էլ իր հերթին դրական ազդեցություն կունենան բնակչության կենսամակարդակի վրա": Անմիջապես դրանից հետո, չգիտես ինչու ներկայացված է 2.2.1 գծապատկերը՝ 2004-2017թթ վարկեր/ՀՆԱ, տրանսֆերտներ/ՀՆԱ և հարկային բեռի շարժընթացը ՀՀ-ում: Չգիտես ինչու գծապատկերի վերլուծությունը սահմանափակվում է 2008 և 2004 թվականների ցուցանիշների վերլուծությամբ: Դրան հետևում է 2.2.1 աղյուսակը՝ 2004-2017թթ ընդհանուր վարկերի, մեկ շնչին ընկնող վարկի և տոկոսադրույքի շարժընթացը ՀՀ-ում: Եվ նորից, ընդամենը մեկ նախադասությամբ համեմատվում են 2008 և 2004 թվականների որոշ ցուցանիշներ: Այնուհետև ներկայացված են ցուցանիշներ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերն ըստ ոլորտների, վարկերի տեսակները, տնտեսական ակտիվության մակարդակը և սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում: Իսկ ենթակետի վերջում արված եզրակացությունները կտրված են կոնտեքստից և չունեն բավարար հիմնավորում:
7. 3.1 ենթակետի առաջին երկու անտեղի և ոչինչ չասող պարբերություններից հետո հեղինակը նշում է, որ "աշխատանքում մշակվել և առաջարկվել է ռեգրեսիոն բանաձև, որը գործնականում հաշվարկվել է համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշների համար: Մեր կարծիքով դրանից հետո բերվող բանաձևը անհասկանալի և չհիմնավորված բանաձև է: Հետևաբար ենթակետի հետագա շարադրանքին չենք անդրադառնում:
8. 3.2 ենթակետում բերված վերլուծության իմաստը չենք հասկանում, անհասկանալի է, օրինակ, թե ինչու 75 էջում համեմատվում են 2015թ. առաջին հինգ ամսվա տնտեսական

ակտիվության ցուցանիշը /ՏԱՑ/ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ՏԱՑ-ի հետ: Կամ 76 էջում արվում է հետևություն, որ "տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպերն արագացել են: Տրամաբանական է, որ եթե այս տեմպերով շարունակվի, ապա 2016 թվականին տնտեսական աճը բյուջեով նախատեսված կկազմի 2.4%": Որ ի՞նչ: Ավելին, դրանից անմիջապես հետո հեղինակը նշում է. "սակայն 2016 թվականին փաստացի տնտեսական աճը կազմել է 0.2 տոկոս, իսկ 2018 թվականին 5,8 տոկոս, այսինքն՝ որքան էլ, որ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակի, թե երկրում տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է, միևնույն է այն ՀՀ քաղաքացուն տնտեսական բարեկեցությունը չի ավելացնում": Ինչի՞ համար է այս ամենը նշվում, անհասկանալի է: Հետո բերվում են բազմաթիվ աղյուսակներ և գծապատկերներ, բազմաթիվ ցուցանիշներով, որոնք, սակայն մեր կարծիքով, հետազոտությունում դրված որևէ խնդիր բավարար մակարդակով չեն լուծում:

9. 95-րդ էջում հեղինակը նշում է, որ ամփոփելով աշխատանքում կատարված վերլուծության արդյունքները , կարելի է եզրակացնել, որ 2009 թվականին 2008թ. նկատմամբ ԵԱՏՄ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի անկումը նկատելի է եղել անդամակցող բոլոր երկրներում: Թե ինչու՞ են համեմատվում 2009 և 2008 թվականները, անհասկանալի է: Ավելին, այդ ժամանակ ԵԱՏՄ-ն ստեղծված չէր:
10. 3.3 ենթակետի առաջին պարբերությունում հեղինակը նշում է, որ "աշխատանքում նպատակ է դրվել հաշվարկել տնտեսության ավելացված արժեք ապահովող ոլորտում, մասնավորապես հագուստի արտադրության ոլորտում, ներդրումների մակարդակը և դրանից բացի գնահատել գործարար ակտիվության հնարավորությունները այս ոլորտը զարգացնելու նպատակով": Տնտեսագիտական տեսանկյունից անհասկանալի ձևակերպում է, և բազմաթիվ հարցեր է առաջացնում /ինչ ասել է տնտեսության ավելացված արժեք ապահովող ոլորտ, ինչու՞ հենց հագուստի արտադրության ոլորտը և այլն/:
11. Ատենախոսության վերջում բերված բազմաթիվ եզրակացություններ ոչ միայն կապ չունեն առաջադրված խնդիրների հետ, այլև կտրված ենք տեքստի բովանդակությունից /օրինակ, 8-րդ եզրակացությունում ՀՀ-ում փոխարժեքի փոփոխությունը/:
12. Գիտական բոլոր նորույթները, եթե կարելի է դրանք այդպիսին որակել, խնդրահարույց են:

Եզրակացություն

Այսպիսով, վերոնշյալ դիտողություններով հանդերձ, կարծում ենք, որ Արփինե Մեխակի Կյուրեղյանի «Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսության վերաբերյալ վերջնական եզրակացություն պետք է տա մասնագիտացված խորհուրդը՝ հաշվի առնելով ատենախոսության քննարկման ընթացքում հարցադրումների պատասխանները և ներկայացվող համապատասխան տեղեկատվությունը ատենախոսի կողմից:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՏՀ «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման» ամբիոնում՝ որպես առաջատար կազմակերպության, ամբիոնի նիստում (26 մայիսի 2020թ. արձանագրություն N 8):

Տ.գ.դ., պրոֆեսոր ***Մ. Մելքումյան***

Տ.գ.դ. դոցենտ ***Ա. Եղիազարյան***

Տ.գ.թ. ասիստենտ ***Ա. Առաքելյան***

Տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մելքումյանի, տ.գ.դ., դոցենտ Ա. Եղիազարյանի և տ.գ.թ. ասիստենտ Ա. Առաքելյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար ***Ն. Հ. Դարբինյան***

2020